ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մարտի 2023 թվականի N 123 -Ա

«ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԴԱՎԻԹ ՄԱՇՈՒՐՅԱՆԻՆ 2021-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՈՒԺԱԿԱՆ ԳԾՈՎ ՓՈԽՏՆՕՐԵՆ ԼԵՎՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ և 163-րդ հոդվածներով՝ «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Դ. Մաշուրյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Դավիթ Մաշուրյանին 2023 թվականի մարտի 23-ից 30-ը ներառյալ տրամադրել 2021-2022 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա չօգտագործված արձակուրդի մի մասը՝ 6 աշխատանքային օր:
2. Արձակուրդում գտնվելու ընթացքում «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունների ժամանակավոր կատարումը հանձնարարել բուժական գծով փոխտնօրեն Լևոն Հարությունյանին:

21.03.2023

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2023թ. մարտի 21
ք. Կապան